Լատին վանաց, և բոցեալ խրամ յորմն՝ զեղան բաղմութեամբ 'ի ներքս՝ և կիսով չափ աւարեցին զվանքն. զայս լուեալ գլխաւորացն այլազգեաց, փութացին անդ՝ առեալ ընդ իւրեանս զՇէյխ Օպատար անուն զմն, սուրբ նոցին, եւ հաղիւ ուրեմն կարճեալ զձեռս աւարառուաց հանին զնոսա արտաքս։ Եւ 'ի սմին գիշերի գրեթէ կենդանուոյն մեռեալ էին վանականք Հայոց։ Եւ 'ի վաղիւ անդր ('ի 22 Յուլիս) դարձեալ խմբեցան 'ի մի ասպատակաւորքն՝ և դիմեցին 'ի վերայ Յոյն և Լատին վանաց, և ժողովեցին զմիաբանս նոցին 'ի մի վայր, և անտի հասին 'ի վանս Հայոց, առին կիսով չափ և զմիաբանս նոցա, Եպիսկոպոսք, Վարդապետք, Սարկաւագունք և այլն, և խառնեալ զամենեսեան 'ի մի, մուծին 'ի տաճարն Ս. Յարութեան և աղխեցին զդուռն 'ի վերայ նոցա։ Իսկ նոքա որք ներսուրթեամբ մնացեալ էին 'ի վանս՝ կային 'ի մեծի յերկիւղի, և ոչ գիտէին թէ ուր ունի եղերիլ վախճան դառնութեանն։ Ապա առին այլազգիք յերից վանօրէից 15 քսակս դրամոց դին վառոթի և դնտակի։ Եհան հրաման 'ի Ճէզար Փաշայէ ընդունիլ երից վանօրէից 150 քսակս փոլիցա, և փութով տալ զփոխանակագիրսն, վանականք անյապաղ կատարեցին զհրամանն։

Իսկ միաբանք որք եղան 'ի Ս. Յարութիւն իբր յարգելանս, մնացին անդ աւուրս 170. ծերունազարդ Զաքարիա եպիսկոպոսն անկաւ անդ 'ի մահիճս, եւ յամրացաւ լեզու նորին. նոյնպէս հիւանդացան ոմանք 'ի միւս ազգաց. իսկ որք արտաքս էին, դեգերէին 'ի դրունս այլազգեաց, եւ պաղատանօք խնդրէին, գոնէ զհիւանդացեալսն հանել արտաքս, եւ փոխանակ նոցին մուծանել զառողջն. այլ չեղեւ հնար, զի կային յերկիւղի մեծի. մի' գուցէ պատահիցէ ումեք մահ եւ տուգանիցեն զբազում քսակս դրամոց։ Ի սոյն միջոցի փակեալ էր և դուռն Ս. Փրկչի վանաց և միաբանք արգիլեալք 'ի ներքս, չէր կարելի երթալ 'ի գերեզման Ս. Աստուածածնի, ոչ միայն յաւուր Կիւրակէի՝ այլ և 'ի տօնի Վերափոխման նորին։ Արգելին նաեւ թաղելոյ զմեռեալս՝ իբրեւ զվաղեմի թշնամի, որոյ վասն անկեալ 'ի դրունս այլազգեաց բազում աղաչանօք հաղիւ ուրեմն հանէին զմիտս նոցա, և առեալ